



ԵՐԵՎԱՆԻ ՄԻԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐԻ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳ

(Նոր խմբագրությամբ)

Հաստատվել է

ԵՊԲՀ ռեկտորի 30.03.2012

թվականի թիվ 42-Մ հրամանով,

փոփոխություններ են կատարվել և

նոր խմբագրությամբ հաստատվել է

ռեկտորի 08.11.2012 թվականի

թիվ 110-Մ-2 հրամանով,

Ռեկտորի պաշտոնակատար Մ.Զ. Նարիմանյան

1. «Ակադեմիական պարտքերի լրացման կարգով» (այսուհետ՝ Կարգ) սահմանվում է Երևանի Միիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի (այսուհետ՝ Համալսարան) ուսանողների ակադեմիական պարտքերի լրացման կանոնները:

2. Սույն Կարգի իրավական հիմքերն են «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության» մասին ՀՀ օրենքը, ՀՀ Կրթության և գիտության նախարարի 2011 թվականի նոյեմբերի 17-ի թիվ 1242-Ն հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության բուհերում ուսանողների հեռացման (ազատման) և վերականգնման կարգը» և այլ իրավական ակտեր:

3. Ուսանողները անբավարար առաջադիմություն ունենալու դեպքերում, բացառությամբ պարտադիր զինվորական ծառայությունից տարկետման

իրավունքով ընդունված ուսանողների, իրավունք ունեն տվյալ ավարտական ուսումնական տարվա սկիզբը լրացնելու առավելագույն 12 կրեդիտ կազմող սկադեմիական պարտքերը՝ առարկաները վերահանձնելով ևս 2 անգամ կամ կրկնելով դրանք՝ Համալսարանի կողմից սահմանված հետևյալ պայմաններով.

4. Ուսանողները կարող են հաճախել լրացուցիչ դասընթացներին իրենց ցանկությամբ և նախաձեռնությամբ:

5. Դասընթացը կազմակերպվում է համապատասխան ֆակուլտետի դեկանի, ամբիոնի վարիչի և ուսանողի փոխհամաձայնությամբ:

6. Դասընթացները կազմակերպվում են յուրաքանչյուր ուսումնական տարվա երկրորդ կիսամյակում՝ ռեկտորի կողմից սահմանված ժամանակացույցով:

Շաբաթվա առաջին դասընթացը կազմակերպվում է շաբաթվա որևէ աշխատանքային օր՝ 7 և 8-րդ դասերի ընթացքում, իսկ երկրորդ դասընթացը՝ շաբաթ օրը ժամը 10-ից 11²⁰:

7. Լրացուցիչ դասընթացներին մասնակցողները իրավունք ունեն սահմանված կարգով հանձնելու երկու հարցումներ, որի արդյունքում ձևավորվում է նոր կիսամյակային գնահատական:

8. Չի թույլատրվում հանձնել հարցումները, եթե ուսանողը բացակայել է սահմանված ժամաքանակներից 15 տոկոս և ավելի դասերին:

9. Հարցումները լրացուցիչ հանձնելու գործընթաց սկսելիս ուսանողը պետք է տեղեկացված լինի, որ գրկվում է նախորդ կիսամյակային գնահատականից՝ անկախ լրացուցիչ հարցման գնահատականի նիշից:

10. Կիսամյակային գնահատականը ձևավորվում է միայն լրացուցիչ դասընթացների երկու հարցման գնահատականների միջինացումից:

11. Ուսանողն իրավունք ունի հաճախելու լրացուցիչ դասերին՝ առանց հարցումները հանձնելու պայմանի, պահպանելով՝ նախորդ կիսամյակում

ստացած գնահատականները՝ ռեկտորի 2012 թվականի մարտի 21-ի թիվ 38-Մ-2 հրամանով հաստատված «Բաց թողնված դասերի լրացման կարգի» 7-րդ կետին համապատասխան:

12. Լրացուցիչ դասընթացի վարձավճարը որոշվում է ռեկտորի կողմից սահմանված կարգով:

13. Դասախոսները վճարվում են լրացուցիչ դասընթացների համար կատարված վճարումների 60 տոկոսի չափով:

14. Սույն Կարգը տարածվում է նաև ռազմաբժշկական ֆակուլտետի կուրսասանտների վրա: